Հավելված
ՀՀ վարչապետի 2012 թ.
դեկտեմբերի 18-ի N 1235 - Ա
որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 - 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Կատարողները	Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները	Փաստաթղթերն ստացող պետական մարմինները	Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները
1	2	3	4	5
ՄԱՍ I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2014-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումների մշակում և տրամադրում	ՀՀ գործադիր, ՀՀ օրենսդիր, ՀՀ դատական մարմիններ ՀՀ դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ	մինչև 2012 թ. դեկտեմբերի 28-ը
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՄԺԾԾ-ի և ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծերի հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակների և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումների կազմման մեթոդական ցուցումների մշակում և տրամադրում	ՀՀ գործադիր, ՀՀ օրենսդիր, ՀՀ դատական մարմիններ ՀՀ դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ	մինչև 2012 թ. դեկտեմբերի 28-ը
3.	Տվյալ ոլորտի աշխատանքների համակարգման համար	ՄԺԾԾ-ի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող	տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող ՀՀ պետական	

1	2	3	4	5
	պատասխանատու հանրապետական գործադիր մարմիններ (սույն ժամանակացույցի I մասում՝ այսուհետ՝ գլխադասային մարմիններ)	պետական կառավարման (այդ թվում՝ նաև ՀՀ տարածքային կառավարման) մարմինների հետ՝ 1) քննարկումների ժամանակացույցի և գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների կողմից իրականացվելիք ծրագրերի գծով ՀՀ 2014-2016 թթ. պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների՝ այդ մարմինների հետ քննարկման կարգի սահմանում և դրա մասին այդ մարմիններին տեղեկացում. 2) քննարկումների անցկացում	կառավարման մարմիններ	մինչև2013 թ. հունվարի 27-ը մինչև 2013 թ. փետրվարի 26-ը
4.	Տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող ՀՀ պետական կառավարման մարմիններ	ՄԺԾԾ-ի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային քաղաքականության հարցերի շուրջ գլխադասային մարմինների կողմից կազմակերպվող քննարկումներին մասնակցություն		մինչև 2013 թ. փետրվարի 26-ը (ըստ գլխադասային մարմինների սահմանած ժամանակացույցի)
5.	ՀՀ պետական կառավարման մարմիններ ՀՀ կենտրոնական բանկ	ՄԺԾԾ-ի և ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծերի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումները ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. փետրվարի 28-ը
6.	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՄԺԾԾ-ի և ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծերի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումները կազմելը և ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համաձայնեցված ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. փետրվարի 28-ը
7.	ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ կենտրոնական բանկի 2013-2015 թթ. գործունեության արդյունքում ստացվելիք եկամուտների, կատարվելիք ծախսերի և առաջացող շահույթի (այդ թվում՝ շահույթի բաշխման) կանխատեսումները մշակելը և մանրամասն հիմնավորումներով ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. փետրվարի 28-ը
8.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ առաջարկություններ մշակելը և ներկայացնելը	ՄԺԾԾ-ի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	մինչև 2013 թ. փետրվարի 28-ը
9.	ՄԺԾԾ-ի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ առաջարկությունները քննարկելը և ներկայացնելը	ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ	մինչև 2013 թ. մարտի 7-ը
10.	ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող	ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդում		մինչև 2013 թ. մարտի 15-ը

1	2	3	4	5
	բարձրագույն խորհուրդ	ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ որոշման ընդունում		
11.	Գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմիններ	տվյալ ոլորտում ՄԺԾԾ-ի հայտերը (քաղաքականության և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2014-2016 թթ. պետական բյուջեների ծախսերի նկարագրությունը) մշակելը և ներկայացնելը (յուրաքանչյուրն իրեն վերաբերող մասով)	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. ապրիլի 5-ը
12.	Գլխադասային մարմիններ	իրենց ոլորտի 2014-2016 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հայտերը (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2014-2016 թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները, ինչպես ամփոփ, այնպես էլ՝ ըստ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող մարմինների գծով) մշակելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. ապրիլի 5-ը
13.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրումն ապահովող միջոցառումների 2014-2016 թթ. ծրագրի նախագիծը մշակելը, գնահատելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. ապրիլի 5-ը
14.	ՀՀ հանրապետական գործադիր մարմիններ՝ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած հարցումների	ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ցանկի՝ ՄԺԾԾ-ի մշակման համար լրացուցիչ տեղեկատվության տրամադրում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ըստ ՀՀ ֆինանսների նախարարության հարցումներում նշված պարբերականության
15.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրումն ապահովող միջոցառումների 2014-2016 թթ. ծրագրի նախագծի քննարկում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ (ըստ անհրաժեշտության)		մինչև 2013 թ. ապրիլի 19-ը
16.	ՀՀ ֆինանսների նախարարություն	յուրաքանչյուր գլխադասային մարմնի և գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական կառավարման մարմնի գծով համապատասխան ոլորտներում ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2014-2016 թթ. կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ առա-	ՄԺԾԾ-ի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	մինչև 2013 թ. մայիսի 6-ը

1	2	3	4	5
		ջարկություններ մշակելը և ներկայացնելը		
17.	ՄԺԾԾ-ի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	յուրաքանչյուր գլխադասային մարմնի և գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական կառավարման մարմնի գծով համապատասխան ոլորտներում ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2014-2016 թթ. կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը	ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ	մինչև 2013 թ. մայիսի 13-ը
18.		համապատասխան ոլորտներում պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2014-2016 թթ. կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների հետ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)		մինչև 2013 թ. մայիսի 23-ը
19.	ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ	ըստ յուրաքանչյուր գլխադասային մարմնի և գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական կառավարման մարմնի՝ համապատասխան ոլորտների ծախսերի ֆինանսավորման 2014-2016 թթ. կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ որոշումների ընդունում		մինչև 2013 թ. մայիսի 27-ը
20.	Տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող ՀՀ պետական կառավարման մարմիններ	ավարտուն տեսքի բերված՝ իրենց ոլորտային 2014-2016 թթ. ՄԺԾԾ-ի նախագծերը մշակելը և ներկայացնելը	տվյալ ոլորտում գլխադասային մարմիններ	մինչև 2013 թ. հունիսի 10-ը
21.	Գլխադասային մարմիններ չունեցող առանձին ոլորտներում ծրագրեր իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմիններ	ավարտուն տեսքի բերված՝ իրենց ոլորտի 2014-2016 թթ. ՄԺԾԾ-ի նախագծերը (ծախսային ռազմավարության) մշակելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. հունիսի 19-ը
22.	Տվյալ ոլորտում գլխադասային մարմիններ	ավարտուն տեսքի բերված՝ իրենց ոլորտի ՄԺԾԾ-ի նախագծերի (ծախսային ռազմավարության)՝ ներառյալ համապատասխան ոլորտներում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների ծախսերի 2014-2016 թթ. ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների վերաբերյալ առաջարկություններ մշակելը և	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. հունիսի 19-ը

1	2	3	4	5
		ներկայացնելը		
23.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	առնվազն մեկ ծրագրի գծով բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) մշակում և տրամադրում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ավարտուն տեսքի բերված՝ իրենց ոլորտային 2014-2016 թթ. ՄԺԾԾ-ի հայտի հետ միասին
24.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՄԺԾԾ-ի նախագծի վերջնական տարբերակը կազմելը և ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2013 թ. հուլիսի 3-ը
25.	ՀՀ կառավարություն	ՄԺԾԾ-ի նախագծի քննարկում և հաստատում		մինչև 2013 թ. հուլիսի 10-ը
26.	ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ կառավարության կողմից հաստատված ՄԺԾԾ-ն ՀՀ Ազգային ժողով ներկայացնելը՝ ի գիտություն	ՀՀ Ազգային ժողով	մինչև 2013 թ. հուլիսի 20-ը
ՄԱՍ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
27.	ՀՀ բնապահպանության նախարարություն	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերություններից յուրաքանչյուրի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկը ներկայացնելը (այն դեպքում, երբ ընկերության գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների թիվը մեկից ավելի է, նաև ընկերության կողմից վճարվող բնապահպանական վճարի գումարի՝ այդ համայնքների միջև բաշխման համամասնությունները և դրանց	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ	մինչև 2013 թ. հունվարի 18-ը

1	2	3	4	5
		հաշվարկման սկզբունքները)		
28.	ՀՀ ֆինանսների նախարարություն	համայնքների՝ 2014 թվականի բյուջեների նախագծերի մշակման և ՀՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և ներկայացնելու պարտադիր բնույթի մեթոդական ցուցումների և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցների (վերջիններս՝ անհրաժեշտության դեպքում) մշակում և ուղարկում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջոցով՝ տեղական ինքնակառավարման մարմիններ	մինչև 2013 թ. փետրվարի 11-ը
29.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների կողմից 2010-2012 թթ. արդյունքներով ՀՀ պետական բյուջե փաստացի մուծված, այդ օրենքով նախատեսված բնապահպանական վճարների գումարների մասին տեղեկատվություն ներկայացնելը՝ ըստ ընկերությունների և նշված վճարների առանձին տեսակների	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	մինչև 2013 թ. փետրվարի 11-ը
30.	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ ՀՀ համապատասխան համայնքների կողմից ՀՀ բնապահպանության նախարարություն և ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացված բնապահպանական ծրագրերով նախատեսվող միջոցառումների իրականացման առաջնայնությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների վերաբերյալ իրենց դիրքորոշումների մասին տեղեկացում	ՀՀ բնապահպանության նախարարություն և ՀՀ առողջապահության նախարարություն բնապահպանական ծրագրեր ներկայացրած ՀՀ համապատասխան համայնքներ	ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1544-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում
31.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	տեղական ինքնակառավարման մարմիններից ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք հողի հարկի և գույքահարկի գծով՝ ըստ առանձին համայնքների 2012 թվականի ելակետային տվյալների ՀՀ մարզպետարաններում ստացման, ինչպես նաև այդ տվյալները ՀՀ մարզպետարանների կողմից ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնելու	ՀՀ մարզպետարաններ	մինչև 2013 թ. ապրիլի 1-ը

1	2	3	4	5
		համար ժամկետների սահմանում		
32.	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակներում ընդգրկված համայնքների ղեկավարներ՝ ՀՀ տարածքային կառավարման մարմինների միջոցով	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն ՀՀ համապատասխան համայնքների կողմից ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված բնապահպանական ծրագրերի գծով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու մասին հայտերը ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. ապրիլի 1-ը
33.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք՝ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ըստ առանձին համայնքների, մշտական բնակչության թվի գծով ելակետային տվյալների տրամադրում	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. հուլիսի 3-ը
34.	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու մասին համայնքներից 2014 թվականի ծրագրային հայտեր ստանալը, քննարկելը, ամփոփելը և ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ հանրապետական գործադիր համապատասխան մարմիններ	մինչև 2013 թ. հուլիսի 4-ը (ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության սահմանած ժամանակացույցի)
35.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ հանրապետական գործադիր համապատասխան մարմիններ	ՄԺԾԾ-ով նախատեսված ոլորտային ծրագրերի գծով սահմանված կողմնորոշիչ չափաքանակների շրջանակներում ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու մասին համայնքների 2014 թվականի ծրագրային հայտերի քննարկում		մինչև 2013 թ. հուլիսի 19-ը (ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության սահմանած ժամանակացույցի)
36.	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)՝ համաձայնեցված ՀՀ տարածքային կառավարման նախարարի հետ	ՀՀ հանրապետական գործադիր համապատասխան մարմինների հետ համագործակցում՝ վերջիններիս համակարգին վերաբերող՝ ՀՀ մարզպետների՝ 1) կողմից իրականացվող ծրագրերի գծով և, 2) ենթակայության ներքո գտնվող հիմնարկների 2014 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման գործում	ՀՀ հանրապետական գործադիր համապատասխան մարմիններ	X

1	2	3	4	5
37.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք՝ ըստ առանձին համայնքների ելակետային տվյալների տրամադրում՝ ՀՀ ֆինանսների նախարարության մեթոդական ցուցումների համաձայն	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. հուլիսի 19-ը
38.	ՀՀ գործադիր, ՀՀ օրենսդիր, ՀՀ դատական մարմիններ ՀՀ դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	մեթոդական ցուցումների համաձայն իրենց և համակարգի 2014 թվականի բյուջետային ֆինան-սավորման հայտերը (ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափով, ինչպես նաև տարած-քային կտրվածքով՝ առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի) կազմելը՝ հաշվի առնելով նաև 35-րդ կետով նախատեսված քննարկումների արդյունքները, և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. օգոստոսի 6-ը
39.	ՀՀ գործադիր, ՀՀ օրենսդիր, ՀՀ դատական մարմիններ ՀՀ դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումների մասին հայ-տերը կազմելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. օգոստոսի 6-ը
40.	ՀՀ գործադիր, ՀՀ օրենսդիր, ՀՀ դատական մարմիններ ՀՀ դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ ՀՀ կենտրոնական բանկ	օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազ-մակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրա-մադրված վարկերի ու դրամա-շնորհների՝ իրենց համակարգում 2014 թվականին օգտագործման մասին կանխատեսումները կազմելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. օգոստոսի 6-ը

1	2	3	4	5
41.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	ՄԺԾԾ-ով նախատեսված ոլորտային ծրագրերի գծով սահմանված կողմնորոշիչ չափաքանակների շրջանակներում մարզի համայնքներից մարզպետարանների միջոցով ստացված՝ ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու մասին 2014 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը քննարկելը, ամփոփելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. օգոստոսի 6-ը
42.	ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ կենտրոնական բանկի 2014 թվականի կապիտալ ներդրումների ծրագրի և վարչական ու գործառնական ծախսերի նախահաշիվների նախագծերը՝ հիմնավորումների հետ միասին ներկայացնելը (նաև 2014 թվականի համար բանկի կողմից ծրագրավորվող ցուցանիշների համեմատականը 2013 թվականին հաստատված, սպասողական և 2012 թվականի փաստացի համապատասխան ցուցանիշների հետ՝ ըստ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատվելիք ծախսային հոդվածների գծով բանկի բացատրագրում նշվող ծախսերի առանձին տարրերի և դրանց նկատմամբ առաջիկա տարվա համար ծրագրավորվող ցուցանիշների փոփոխման բացատրությունը)	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. օգոստոսի 6-ը
43.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	հարկային եկամուտների և պետական տուրքի (ըստ առանձին հարկատեսակների) գծով 2014 թվականի բյուջետային եկամուտների գնահատականների տրամադրում (առանձին նշելով հարկային վարչարարության և օրենսդրական փոփոխության հաշվին ակնկալվող լրացուցիչ բյուջետային եկամուտների գումարները)	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. օգոստոսի 9-ը
44.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից ՀՀ համայնքների բյուջեներին տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկներում օգտագործման համար ստացված՝ պետական մարմինների կողմից հաշվառվող ելակետային տվյալների մասին տեղական ինքնակառավարման մարմիններ ծանուցումներ ուղարկելը	ՀՀ մարզպետարանների միջոցով՝ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ	նշված տվյալներն ամբողջական ձևով ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում

1	2	3	4	5
45.	ՀՀ պետական կառավարման հանրապետական մարմիններ ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ կառավարության 2014 թվականի պետական բյուջեի ուղերձի մասը կազմող՝ 2014 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին ՀՀ կառավարության զեկույցի՝ իրենց իրավասությանը վերաբերող համապատասխան հատվածների նախագծերը (մինչև 3 էջի սահմաններում) մշակելը և ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. օգոստոսի 23-ը
46.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ ՀՀ համայնքների ղեկավարներ (յուրաքանչյուր մարմինը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	«Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքի կիրարկման գործընթացի իրականացման ապահովում	ՀՀ ֆինանսների նախարարություն	«Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ժամկետներում (օրենքով նախատեսված դեպքում)
47.	ՀՀ պետական կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով) ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքների նախագծերը մշակելը (ըստ անհրաժեշտության) և ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2013 թ. սեպտեմբերի 11-ը
48.	x	ՀՀ պետական կառավարման մարմինների՝ 2014 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի, դրանց գծով առաջարկվող ֆինանսավորման չափերի, մակրոտնտեսական ցուցանիշների, բյուջետային եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի կանխատեսումների քննարկում և համաձայնեցում ՀՀ վարչապետի մոտ	x	մինչև 2013 թ. սեպտեմբերի 13-ը
49.	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ վարչապետի մոտ՝ սույն ժամանակացույցի 48-րդ կետում նշված քննարկումների արդյունքները հաշվի առնելով Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2014 թվականի տարեկան ծրագրի նախագիծը մշակելը և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2013 թ. սեպտեմբերի 20-ը

1	2	3	4	5
50.	ՀՀ պետական կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՀՀ օրենքների պահանջների համաձայն ՀՀ 2014 թ. պետական բյուջեի նախագծի հետ միասին կամ նշված նախագծի կազմի մեջ ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու ենթակա ծրագրերի՝ ՀՀ վարչապետի մոտ՝ սույն ժամանակացույցի 48-րդ կետում նշված քննարկումների արդյունքներով նախագծերը մշակելը և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելը՝ հավանություն ստանալու համար, այդ թվում՝ 1) ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն 2014 թվականին իրականացվելիք գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերի նախագծերը. 2) ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի 2014 թվականի ծրագրի նախագիծը. 3) ՀՀ առողջապահության նախարարություն՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն Առողջապահության պետական նպատակային 2014 թվականի տարեկան ծրագրի նախագիծը. 4) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ ա. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն Երեխայի իրավունքների պաշտպանության 2014 թվականի տարեկան ծրագրի նախագիծը, բ. «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5.1-ին հոդվածի համաձայն Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2014 թվականի տարեկան ծրագրի նախագիծը,	ՀՀ կառավարություն	մինչև 2013 թ. սեպտեմբերի 20-ը

1	2	3	4	5
		գ. «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Զբաղվածության կարգավորման 2014 թվականի պետական ծրագրի նախագիծը. 5) ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ ա. «Գյումրի քաղաքի վերա-կանգնման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն Գյումրի քաղաքի վերականգնման 2014 թվա-կանի ծրագրի նախագիծը, բ. «Սահմանամերձ տարածաշրջան-ների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդ-վածի համաձայն Սահմանամերձ տարածաշրջանների զարգացման 2014 թվականի ծրագրի նախագիծը		
51.	ՀՀ պետական կառավարման մարմիններ (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով)	ՀՀ կառավարության կողմից հաս-տատված ՀՀ 2014-2016 թթ. ՄԺԾԾ-ում ընդգրկված և 2014 թվա-կանի բյուջետային ֆինանսավորման հայտում, որպես բյուջետային ֆինանսավորում պահանջող, նախատեսվելիք ծրագրերի նա-խագծերը մշակելը և անհրաժեշ-տության դեպքում դրանք ՀՀ կա-ռավարության հաստատմանը ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2013 թ. սեպտեմբերի 20-ը
52.	ՀՀ հանրապետական գործադիր մարմիններ	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքների նախագծերի քննարկման ապահովում ՀՀ կառավարությունում	ՀՀ կառավարություն	մինչև 2013 թ. սեպտեմբերի 26-ը
53.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագիծը կազմելը և ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2013 թ. սեպտեմբերի 26-ը
54.	ՀՀ կառավարություն	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկում և այն ՀՀ Ազգային ժողով ներկայաց-նելու մասին որոշման ընդունում	x	մինչև 2013 թ. սեպտեմբերի 26-ը
55.	ՀՀ կենտրոնական բանկ	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը ներկայացնելը	ՀՀ կառավարություն	մինչև 2013 թ. հոկտեմբերի 2-ը
56.	ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագիծը և դրա հետ միասին ՀՀ օրենքների պահանջների համաձայն այլ նյութեր ներկայացնելը	ՀՀ Ազգային ժողով	մինչև 2013 թ. հոկտեմբերի 2-ը
57.	ՀՀ ֆինանսների	«Հայաստանի Հանրապետության	x	ՀՀ 2014 թվականի

1	2	3	4	5
	նախարարություն	2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի (բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող հարցերի)՝ օրենքով սահմանված կարգով հրապարակում		պետական բյուջեի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու օրվանից եռօրյա ժամկետում
58.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի հանրային քննարկումների հրավերի հրապարակում	x	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագիծը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու օրվանից եռօրյա ժամկետում
59.	ՀՀ ֆինանսների նախարարություն	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի հանրային քննարկումների արդյունքներով կազմված ամփոփաթերթի և նշված օրենքի նախագծի լրամշակված տարբերակի տեղադրում ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում	x	ՀՀ կառավարության կողմից 2014 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելուն հաջորդող օրը
60.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից տրվելիք հատկացումների չափերի մասին ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկությունների (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկման մեթոդաբանությունը) ուղարկում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (ՀՀ մարզպետարանների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրելու համար)	«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի պաշտոնական հրապարակումից հետո մեկամսյա ժամկետում
61.	ՀՀ գործադիր, ՀՀ օրենսդիր, ՀՀ դատական մարմիններ ՀՀ դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ (յուրաքանչյուր մարմին՝ իրեն վերապահված իրավասության մասով	ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսային ծրագրերի գծով հատկացումները տարածքային բաշխման ներկայացնելը (առանձնացված՝ ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի)	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2013 թ. հոկտեմբերի 18-ը
62.	ՀՀ գործադիր, ՀՀ օրենսդիր,	2014 թվականի պետական գնումների անվանացանկի	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ֆինանսների նախարարության

1	2	3	4	5
	ՀՀ դատական մարմիններ ՀՀ դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմիններ (յուրաքանչյուր մարմին՝ իրեն վերապահված իրավասության մասով)	կազմման գործընթացի իրականացման ապահովում		կողմից սահմանված ժամկետներում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ